ԱՐՑԱԽԻ ԻՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

3. ԲՆԱԿԵՑՆԵԼ ԱՐՑԱԽԸ

1988 թ. օգոստոս ամիսն էր: ԼՂԻՄ-ի մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանի աշխատասենյակում եմ. զրույցի թեման Արցախի էկոնոմիկան է, նրա բնական հարստությունների իրացման, կադրերի հարցը: Պատմում եմ հանչված մի տնտեսագիտակադեմիկոսի մասին, ծննդով արցախցի, որը Հայաստանի ակադեմիայում գիտական պաշտոն ստանալու նախաբանին (1960 թ.) տնտեսագետ խոսում էր և խոսքանում զրազվել հարազատ մարզի էկոնոմիկայի առոչ հարցերի գիտական ուսումնասիրությամբ: Սակայն պաշտոն ստանալուց կարճ ժամանակ անց խոսքումը ոչ միայն մոռացավ, այլև վախենում էր անգամ Արցախի անունը տալուց: Հենրիկ Պողոսյանն անմիջապես արձագանքեց.

— Ճանչչում եմ այդ գիտնականին... Երբ մարդ երկար ժամանակ կտրվում է հայրենի հողից, սկսում է այլասերվել: Դա հին փիլիսոփայական նշմարություն է...

— Շատերը գիտեն, թե որքան հարուստ է Արցախի բնությունը: Իսկ որքա՞ն մարդ կարող է զբաղեցնել և պահել այդ բնությունը: Կես միլիոն կարո՞ղ է:

Դարձյալ անմիջապես և վստահորեն պատասխանեց.

— Կարող է՝ մեկ միլիոն:

Ինչպես արդեն ասվեց, Արցախում այսօր բնակվում է շուրջ 190 հազար մարդ, որից 150 հազարը՝ հայ: Մասամբարապես նույնն է Զանգեզուրի բնակչության թիվը: Հետաքրքիր է նշել, որ Նախիջևանի ԻԽՍՀ բնակչությունը այսօր հասնում է 300 հազարի: Այս հարվածիչը չի կարող չմտահոգել, առավել ևս, որ Զանգեզուրի բնակչության աճը այսօր շատ դանդաղ է ընթանում, իսկ Արցախի բնակչությունը մինչև 1988 թ. կրճատվելու միտում ուներ: Ադր. ԽՍՀ ղեկավարությունը ամեն ինչ արեց, որպեսզի արցախյան դրախտը հայերի համար վերածվի դժոխքի, որ հայերը հեռանան մարզից: Ահա մի քանի թիվ այդ մասին նույն Հադրութի շրջանից:

Նախապատերազմյան 1940 թ. համեմատությամբ շրջանի բնտանիքների (ծխերի) թիվը պակասել է 650-ով կամ 13 տոկոսով, իսկ բնակիչների թիվը՝ 2 անգամ (1940 թվականին բնտանիքների անդամների միջին թիվը կազմում էր 5,6 մարդ, իսկ այսօր բնդամենը 3,1 է): Այսինքն՝ շրջանի բնակչությունը ծերացել է, բնտանիքի զավակները լքել են ծնողներին: Այս եղանակով շրջանում դատարկվել-ամայացել է 4 գյուղ, ամայացման եզրին է ևս 8 գյուղ, որոնք ունեն 4—9 բնտանիք, իսկ 2 գյուղում էլ կա 22 և 27 բնտանիք, բայց դրանք նույնպես մարող են, չունեն երիտասարդ անդամներ և չունեն դպրոց: Իսկ գյուղը նախ և առաջ դպրոց է. եթե չկա դպրոց, ուրեմն՝ գյուղը չունի ապագա: Ամբողջ Արցախում խորհրդային իշխանության տարիներին վերացել է 85 գյուղական բնակավայր:

Ղարաբաղյան շարժման եզրալիքը նոր չունչ հաղորդեց մարող գյուղերին: Ցոր գյուղի բնակիչների թիվը մեկ տարի առաջ կրկնակի փոքր էր, քան զոհվածների նուիրածների վրա գրված 106 գինվորների թիվը: 1988 թ. հայտնի դեպքերից հետո, բնդամենը մեկ տարվա ընթացքում, այս գյուղում 35 բնտանիք ավելացավ, կենդանացավ նաև գյուղի դպրոցը, որը հիմնադրել է հերը՝ Մեսրոպ Մաշտոցը: Գյուղը նոր է բաժանվել-ապահովագրագրվել, կազմավորվել որպես առանձին կոլտնտեսություն: Սակայն այսօր էլ գյուղի բնակչության թիվը ավելի քան 6 անգամ գիշում է նախապատերազմյան բնակչության թվին:

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողական շինարարական տղաները եկել են և բանացիորեն վերակենդանացնում են արդեն վաղուց ամայացած ու լքված Սպիտակաշենը՝ այստեղ կազմակերպելով գյուղատնտեսական կոոպերատիվ: Նրանք սկսել են կառուցել առաջին շենքերը, որոնցից մեկում այժմ ձմեռում են, քաշել-բերել են էլեկտրական գիծը: Հոկտեմբերի 17-ը, երբ առաջին էլեկտրական լամպերը լուսավորեց խավարած Սպիտակաշենը և նրա մերձակա բարձունքները, այստեղ վերածվեց իսկական տոնի: Տեղացիները համգվված պնդում են, որ այդ լամպերի վառվելը հայկական գյուղում դիմացի ադրբեջանական գյուղերի քալաք ու ավարի սովոր մարդկանց համար ավելի սթափեցնող նշանակություն ունի, քան եթե այստեղ տեղադրեին... մի բնդանոր:

Նորաբնակները են եկել նաև շրջանի մյուս բնակավայրեր, եկել են Բաքվից, Երևանից, Հայաստանի և Ադրբեջանի մյուս քաղաքներից ու շրջաններից: Ընդամենը Հադրութի շրջանում մեկ տարվա ընթացքում ավելացել է 600 բնակիչ, որն, ինչ խոսք, շատ փոքր է, սակայն այստեղ կարևորը նոր երևույթի սկզբնավորումն է, որը պետք է խրախուսել ըստ ամենայնի:

Միաժամանակ պետք է խոստովանել, որ այդ նորաբնակները առայժմ գլխավորապես եկել են անցած մեկ և կես տարվա *արտակարգ իրավիճակի անմիջական ազդեցության տակ*, այսինքն՝ շատ թե քիչ պատահականորեն: Պետք է ենթադրել, որ նման արտակարգ իրավիճակ այլևս չի կրկնվի, թեկուզ և այն պարզ պատճառով, որ Ադր. ԽՍՀ-ում այլևս հայեր գրեթե չկան: Ուրեմն և դժվար է սպասել հայրենադարձության նոր ալիք դեպի Արցախ՝ վերոհիշյալ արտակարգ գործոնի հետևանքով: Չի կարելի հույսեր կապել նաև հայրենասիրական-բարոյախոսական կոչերի հետ, որոնք պարբերաբար հնչում են Ազատության հրապարակում և մամուլի էջերում: Դրանց կարձագահենն միայն հատուկենտ անձնվեր մարդիկ, որոնք, հանուն ազգային գաղափարի, ժամանակավորապես կամ երկարատև կերաժարվեն սեփական անձի և բնտանիքի խաղաղ ու բարեկեցիկ կյանքից: Այսպես թե այնպես, այս ճանապարհով դժվար է սպասել դեպի Արցախ ուղղված զանգվածային հերգաղթ:

Ասվածից այն եզրակացությունն է բխում, որ Արցախի բնակեցումը պահանջում է մարզից դուրս ապրող արցախցիների սոցիալ-տնտեսական վիճակի և հակումների համակողմանի ուսումնասիրություն կատարել, որն, իհարկե, այնքան էլ դյուրին գործ չէ, բայց միանգամայն հնարավոր է: Ելնելով ուսումնասիրության արդյունքների վերլուծությունից, տեղերում կարոշվեն ապագա նորաբնակների համար աշխատատեղերի ստեղծման, կուլտուր-կենցաղային օբյեկտների տեղադրման և այլ հարցեր:

Քանի որ Արցախի բնակեցման խնդիրը ոչ թե սովորական, այլ արտակարգ խնդիր է, ուստի դրա լուծումը պահանջում է այնտեղ մշտական մեկնողների *տնտեսական և բարոյական հատուկ և երկարաժամկետ միջոցառումների համակարգ*, որի հիմնական ուղղությունները անհրաժեշտ է անհապաղ մշակել, ընդունել և ձեռնամուխ լինել դրա իրագործմանը:

Արցախի բնակեցումը հայերով պետք է հենվի 2 հիմնական գործոնի վրա, որից առաջինն, անտարակույս, մարզ մեկնողի, նրա բնտանիքի կյանքի ապահովության երաշխիքն է: Հայաստանի և Արցախի վերամիավորման վերաբերյալ 1989 թ. նոյեմբերի 30-ի պատմական որոշումով ստեղծված է այդ երաշխիքի ազգային- իրավական օրենսդրական նախապայմանը, որով վերոհիշյալ երաշխիքն իր վրա է վերցնում ամբողջ Խորհրդային Հայաստանը:

Արցախի բնակեցման մյուս գործոնը տնտեսականն է: Այս շարքում չափազանց կարևոր նախ հողը գյուղացուն տալն է, նոր գյուղացիական հողատիրության ձևավորումը, որը ոչնչացվել էր 30-ական թվականների սկզբին: Այդ մասին արդեն ասվեց: Երկրորդ, կոոպերատիվների, վարձակալության և անհատական աշխատանքային գործունեության ըստ ամենայնի խրախուսումը:

Եվ վերջապես, տնտեսական գործոնի մեջ է մտնում նաև Արցախ մեկնող նորաբնակների ֆինանսական խրախուսումը: Ներկայումս այդ խրախուսումը բացառապես բարեգործական բնույթ ունի, մինչդեռ պետք է հետապնդի նորաբնակ արցախցիների տնտեսական ձեռնարկատիրության (ձեռնարկչական) խրախուսում: Իսկ դա կպահանջի արդեն զգալի ներդրումներ Արցախ մեկնող յուրաքանչյուր աշխատանքի հաշվով:

Տեղին է հիշեցնել հայ բնթերցողին հայտնի հետևյալ ուշագրավ փաստը: Արևմտագերմանական իշխանությունները, այնտեղի արտագնա բուրժերից ազատվելու համար, Թուրքիա վերադարձող յուրաքանչյուր աշխատողի հաշվով հատկացնում են 10 հազար դոլարի գումար և դրանից բիչ պակաս էլ՝ նրա բնտանիքի անդամների համար: Այդ գումարը թույլ է տալիս հայրենիքում սեփական արտադրություն բացել...

Արցախ մեկնող տարեկան 5—10 հազար երիտասարդ նորաբնակների հաշվով կպահանջվի, մոտավոր հաշվարկով, շուրջ 50—100 միլիոն ռուբ. կապիտալ ներդրում: Սա կապիտալ ներդրում է (և ոչ բարեգործական գումար), որ հնարավորություն կտա նոր արցախցուն այնտեղ տնտեսական շահավետ գործունեություն ծավալելու համար:

Ըստ էության խոսքը նոր արցախցիների ձեռնարկատիրական (ձեռնարկչական) ֆոնդի գոյացման և օգտագործման մասին է, որը կարող է ունենալ ոչ միայն դրամական, այլև նյութական-ապրանքային ձև, որը ամեն անգամ կորոշվի՝ ելնելով կոնկրետ իրավիճակի հաշվառումից:

Կարծում եմ, որ վերոհիշյալ ֆոնդի գոյացման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը կասկածից դուրս է: Մնում է մտածել այդ ֆոնդի գոյացման աղբյուրների, բաշխման և տնօրինման մասին: Ֆինանսավորել Արցախ մեկնող տարեկան 5—10 հազար աշխատող ձեռներեց երիտասարդների, նշանակում է ֆինանսավորել Արցախի բնակչության աճը տարեկան 15—30 հազար մարդու չափով: Մի նպատակ, որ ինքնին ավելի քան արդարացնում է հիշյալ կապիտալ ներդրումը:

Այս հանձնարարականը պետք է հաղթահարվեն բազմաթիվ արգելքներ և արգելակներ: Զրվարկելով դրանք, կուզենայի հատուկ ընդգծել հոգեբանական արգելքներին նշանակությունը, որոնք շատ դեպքերում պակաս կարևոր չեն նյութականից, հանուն էլ առաջ հորդորում են դրանց: Ահա դրանցից մեկը: Երբ հարցնում էի խծաբերդցիներին, թե ինչու հող չեն պահանջում, չեն օգտագործում բնության բարիքները, պատասխանը զրեթե միշտ միևնույնն էր.

— Մեր ինչի՞ն է պետք: Ամեն մեկս ունենք մեր հողամասը, պահում ենք կով, ոչխար, ուրիշ անասուն: Վատ չենք ապրում, ավելին՝ օգնում ենք երեհանում, Աբովյանում, Ստեփանակերտում գտնվող մեր բանելիներին կարտոֆիլով, յուղ ու պանրով, մսով, մեղրով, ընկույզով: էլ ի՞նչ է պետք մեզ...

Գյուղի դպրոցի երիտասարդ տնօրեն Բորիս Հայրապետյանը հետևյալ կերպ է մեկնաբանում այս երևույթը.

— Մինչև դարաբաղյան շարժումը թուրք ծիավոր անտառապահը տարվա բոլոր եղանակներին անցնում էր գյուղամիջով և, զրված օրենքով, հարկ էր հավաքում ամեն ծխից՝ մի բեռ կարտոֆիլ, տանձ, խնձոր, ընկույզ և այլ մթերք: Այժմ այդ գաղութային հարկը վերացավ: Բայց գյուղը և գյուղացիները մնացել են գաղութ Հայաստանում կամ Ստեփանակերտում ապրող իրենց հարազատների համար: Հավաքում են բոլոր մթերքներից, մորթում անասուն, պարկով և կնուցներով ուղարկում, որ ապրեն քաղաքում: Առանց դրա սոված կմնան: Եթե հարցնես, թե ինչ ծախս է պահանջում այդ մթերքը փոխադրելը, ապա կպատասխանվի, որ այն մի քանի անգամ գերազանցում է մթերքի բուն արժեքին:

«Խնոցի հարեցի,
Յուղով պարտքս տվեցի,
Թանով տոմս պահեցի».—

Սա մեր մասին է գրված:

Ասված է ոչ միայն այս երկու տարիների մասին, այլև շատ ավելի վաղ ժամանակների: Բայց եթե հաղորդեցու օրախում 1944 թ. հինգ-վեց շնչից այժմ մնացել է երեքը, ապա դժվար է ասել, թե որքան կարող է հարատևել նման օրախը և պտղաբերել նրա դարավոր ծառը...

Եվ այսպես, *արցախյան գյուղն այսօր ապրում է գրեթե փակ բնատնտեսության պայմաններում, բնատնտեսական կենցաղով, բնատնտեսական-գաղութային հոգեբանությամբ:* Այստեղ հարստանալու մասին խոսք անգամ չկա, հատկապես եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ 70 տարի շարունակ խորհրդային-կուսակցական հրապարակային բարոյախոսության մեջ հարուստը և հարստությունը համարվում էին դասակարգային հանցանշան, ամբարշտության բարձրագույն բարիք: Այդպիսին էր աշխատավոր խավի համար նախատեսված պաշտոնական արդյունաբերական գաղափարախոսությունը և հոգեբանությունը, չնայած միանգամայն ուրիշ էր երկրի գլխավոր գաղափարախոսների ու կառավարող վերնախավի առօրյա կենցաղը: Այսօր վերոհիշյալ հոգեբանությունը վերակառուցվում-փոխվում է, սակայն զարմանալիորեն շատ ավելի դանդաղ են փոխվում աշխատավոր խավի հոգեբանությունը և վախը: Մեծ է պրոլետարական գաղափարախոսության իներցիայի ուժը:

Արդ, իբրև հայ տնտեսագետ, խորապես համոզված եմ՝ որքան էլ մեծ է Արցախ մեկնողների ազգային հայրենասիրական մղումների ուժը, *Արցախի տնտեսական իրացման ամենամեծ, հարատև և իրական գործոնը կարող է և կլինի նորաբնակ և հին արցախցիների բարգավաճման և հարստանալու, այո, հարատևալու տնտեսական գործոնը.* Արցախի լքված դրախտը լիքույթ տալիս է դրա հնարավորությունը:

Հիշյալ գործոնը պետք է բնկալնե, ըստ ամենայնի խրախուսեն և իրացնեն Արցախի տեղական իշխանության բոլոր օղակները, որոնք այսօր տնօրինում են հողը, ջուրը, անտառը, բնական մյուս հարստությունները: Ինչպես արդեն համոզվեցինք, այդ հարստությունները այսօր անտեսված են մատնված, դրանց օգտագործումը անխնա է և անարդյունավետ: Հետևապես դրանք պետք է հանձնվեն ձեռներեց և աշխատասեր մարդկանց ի տնօրինություն այսօր-վաղը ԽՍՀՄ բարձրագույն սայանում ընդունվելիք նոր տնտեսական օրենքների հիման վրա, այսինքն՝ հանձնվեն վարձակալներին, վարձակալական բրիգադներին, կոոպերատիվներին, բնտանիքներին և անհատ մարդկանց:

Այս ուղղությամբ նկատելի գործեն սկսում խաղալ Արցախում կազմակերպվող տասնյակ կոոպերատիվներ, որոնց գործունեությունը արժե անդրադառնալ առանձին:

Ն. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Երևանի ժողտնտեսության ինստիտուտի քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր